Կոդ ----------
Միավոր----------

Պատմության օլիմպիադայի հանրապետական փուլ (2025-2026 ուստարի)
11-12-րդ դասարան (տևողությունը՝ 180 րոպե)

Ընտրովի պատասխանով հարցեր (յուրաքանչյուր ճիշտ պատասխան 0,5 միավոր), ճիշտ պատասխանը վերցրե՛ք օղակի մեջ

1. **Ե՞րբ է կնքվել Արտաշատի հայ-հռոմեական պայմանագիրը:**
   1) Ք.ա. 69 թ. 2) Ք.ա. 68 թ. 3) Ք.ա. 66 թ. 4) Ք.ա.67 թ.
2. **Ո՞վ է գլխավորել 703 թ. հակաարաբական ապստամբությունը:**
   1) Սմբատ Բագրատունի 3) Մուշեղ Բագրատունի
   2) Աշոտ Բագրատունի 4) Բագարատ Բագրատունի
3. **Որտե՞ղ է Սմբատ Արծրունին օծվել հայոց թագավոր:**
   1) Վանում 2) Աղթամարում 3) Էջմիածնում 4) Արգինայում
4. **Որքա՞ն հայ կոտորվեց Ադանայի նահանգում 1909 թ.:**
   1) 25 հզ. 2) 30 հզ. 3) 250 հզ. 4) 300 հզ.
5. **Կիլիկիայում ո՞վ էր տնօրինում արքունի ծախսերն ու եկամուտները:**
   1) պայլ 2) սենեսկալ 3) կանցլեր 4) գունդստաբլ
6. **Գևորգ Դ կաթողիկոսի նախաձեռնությամբ Էջմիածնում ե՞րբ է բացվել հոգևոր ճեմարանը:**
   1) 1864 թ. 2) 1871 թ. 3) 1874 թ. 4) 1884 թ.
7. **1915 թ. Ուրֆայի ինքնապաշտպանության ժամանակ ո՞վ էր գլխավորում զինվորական խորհուրդը :**
   1) Տիգրան Անդրեասյան 3) Ղուկաս Տեռվլեթյան
   2) Հակոբ Կոտոյան 4) Մկրտիչ Յոթնեղբայրյան
8. **Ո՞ր գյուղի մոտ տեղի ունեցած կռվում է զոհվում Գևորգ Չավուշը:**
   1) Գելիգուզան 2) Ահարոնք 3) Սուլուխ 4) Մկդենք
9. **Ե՞րբ է տեղի ունեցել Յարմուքի ճակատամարտը:**
   1) 632 թ. 2) 636 թ. 3) 637 թ. 4) 642 թ.
10. **Ռուսաստանյան կայսրության ո՞ր տիրակալը վերացրեց ճորտատիրությունը:**
    1) Պյոտր I 2) Եկատերինա II 3) Նիկոլայ II 4) Ալեքսանդր II
11. **Որտե՞ղ է տեղի ունեցել Վարդերի հեղափոխությունը:**
    1) Վրաստան 2) Ղրղզստան 3) Հունգարիա 4) Ուկրաինա

✂- - - -

12. Ո՞րն է Վերածննդի ներկայացուցիչ Թոմաս Մորի ստեղծագործությունը:

1) «Ուտոպիա» 2) «Արևի քաղաքը» 3) «Դեկամերոն» 4) «Գովք հիմարության»

Կարճ պատասխանով առաջադրանքներ

13. Ընտրե՛ք երեք սխալ պնդումները *(յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,5 միավոր, ընդհանուր 1,5 միավոր)*:

ա. Իսրայել Օրին, տեղափոխվելով Գերմանիա, հաստատվել է Պֆալց երկրամասի կենտրոն Դորտմունդ քաղաքում:

բ. Ռազմական օգնության դիմաց հայ մելիքները խոստացել էին Հովհան Վիլհելմին ճանաչել Հայաստանի թագավոր:

գ. Գանձասարի հայոց կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը ղեկավարել է Ար-ցախի զինված պայքարը:

դ. Պարսկական շահը ճանաչել է Դավիթ Բեկի իշխանությունը, նրա հետ դաշինք է կնքել և իրավունք վերապահել դրամ հատելու:

ե. Ռուսաստանի վարչապետ Վորոնցովին ներկայացրած՝ Հովսեփ Էմինի ազատագրական ծրագիրը կոչվել է «Հյուսիսային»:

զ. Հայկական մարզը ստեղծվել է Թուրքմենչայի հաշտության պայմանագրի կնքումից հետո:

է. Հնդկահայ մեծահարուստ Շահամիր Շահամիրյանը 1772 թ. Մադրասում հիմնում է հայկական տպարան:

14. Թվարկվածներից որո՞նք են ճիշտ բնութագրում Սյունիքում և Արցախում 1720–ական թթ. ծավալված ազատագրական պայքարի նշանակությունը. *(յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,5 միավոր, ընդհանուր 1,5 միավոր)*:

ա. Հայկական ուժերի տարած բազում հաղթանակների շնորհիվ հնարավոր եղավ մոտ կես դար թոթափել օսմանյան և պարսկական տիրապետությունները:

բ. Ազատագրական այդ պայքարը մեծապես բարձրացրեց հայ ժողովրդի ինքնագիտակցությունն ու ազատասիրական ոգին:

գ. Ազատագրական այդ պայքարը հավատ ներշնչեց սեփական ուժերի նկատմամբ:

դ. Ստիպեց պարսից պետությանն իր հետագա քաղաքականության մեջ հաշվի նստել հայկական մելիքությունների հետ, ճանաչել նրանց իրավունքները:
ե. Կասեցրեց օսմանյան զորքերի՝ դեպի Արարատյան դաշտ արշավանքը:
զ. Ապահովեց Նադիր շահի հաղթանակը՝ Պարսկաստանից աֆղանական և թուրքական նվաճողներին դուրս քշելու գործում:
է. Ռուսաստանին անցան Արևելյան Հայաստանի զգալի մասը, Երևանի ու Նախիջևանի խանությունները:

15. Ընտրե՛ք տերմինների ճիշտ բացատրությունները *(յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,5 միավոր, ընդհանուր 1,5 միավոր)*:

ա. Հայոց եկեղեցին քրիստոնեական մյուս եկեղեցիների հետ միավորման կողմնակիցները Կիլիկիայում անվանվեցին ունիթորներ:
բ. Պրոտեկտորատները Մեծ Բրիտանիայի հովանու ներքո տարածքներ էին, որոնք ունեին արտաքին ինքնավարություն, սակայն ներքին քաղաքականության ասպարեզում կախված էին մետրոպոլիայից:
գ. Արքունիքի և թագավորական պահակազորի հրամանատարը հազարապետն էր:
դ. Ռուսական կայսրությունում հայ եկեղեցու իրավունքներն ու պարտականությունները, եկեղեցու և կառավարության փոխհարաբերությունները սահմանող փաստաթուղթը հայտնի է «պոլոժենիե» անունով:
ե. Հայոց ապագա պետության բարձրագույն օրենսդիր մարմինը, ըստ «Որոգայթ փառացի», կոչվում էր Հայոց ազգային ժողով:
զ. Մայիսյան ապստամբության ժամանակ մայրաքաղաք Երևանում ստեղծվեց իշխանության նոր մարմին՝ Հայրենիքի փրկության կոմիտե (ՀՓԿ):
է. Վերացական (աբստրակտ) նկարչությունը գույների և ձևերի համադրություն է՝ զրկված առարկայությունից:

16. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ *(1 միավոր)*:
ա. Լեռնային Ղարաբաղի անկախության հանրաքվեի անցկացումը:
բ. Արթուր Մկրտչյանի ընտրվելը ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահ:
գ. Ղարաբաղա–ադրբեջանական առաջին պատերազմում զինադադարի հաստատումը:
դ. ԼՂՀ Գերագույն խորհրդի կողմից պետական դրոշի հաստատումը:
ե. «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին» փաստաթղթի ընդունումը:
զ. Չեխոսլովակիայի բաժանվելը երկու նոր պետությունների:
է. Ղրղզստանում կակաչների հեղափոխությունը:

ե	ա	բ	դ	զ	գ	է

Վերլուծական հարցեր

17. Համապատասխանեցրե՛ք մշակութային գործիչներին նրանց աշխատանքների բովանդակության հետ: *(ճիշտ պատասխան՝ 0,3 միավոր, ընդհանուր՝ 1,5 միավոր)*

Գործիչ	Աշխատանք
1. Դավիթ Անհաղթ	**ա.** V դ. կեսին Սասանյան տիրապետության դեմ կազմակերպված ապստամբության նկարագրություն:
2. Եզնիկ Կողբացի	**բ.** Հակաարաբական ապստամբությունները Հայաստանում:
3. Եղիշե	**գ.** Տեղեկություններ է հաղորդում Արեգակի, Երկրի և Լուսնի համեմատական չափերի մասին:
4. Սեբեոս	**դ.** Ներկայացնում է Հայաստանի առաջին բաժանումը:
5. Ագաթանգեղոս	**ե.** Պաշտպանում է քրիստոնեական հավատքը հակադիր ուսմունքներից:
	զ. Ներկայացնում է Հայաստանում քրիստոնեության տարածման և պետական կրոն հռչակվելու իրադարձությունները:

1	2	3	4	5

18. Լրացնե՛լ բացթողնված հատվածը *(յուրաքանչյուրը 0,5 միավոր, ընդհանուր՝ 2,5 միավոր)*:

1915 թ. հուլիսի վերջերին թուրքական իշխանությունները հրամայում են Միջերկրական ծովի հյուսիսարևելյան ափին ընկած Սուետիա գավառակի հայությանը տարագրվել: Տեղի զուտ հայկական վեց գյուղերի (1) …… (որքա՞ն) բնակիչներ վճռում են չենթարկվել և բարձրանալ մոտակա (2)…… (ո՞ր) լեռը: Կազմվում է ղեկավար մարմին՝ (3)…… (ո՞ւմ) գլխավորությամբ: Սեպտեմբերի 5-ին ֆրանսիական «Գիշեն» հածանավն անսպասելիորեն հայտնվում է ափամերձ ջրերում: (4)…… (ե՞րբ) հասնում է բաղձալի օգնությունը, իսկ երկու օր հետո սկսվում է հայերի տարհանումը: Փրկված 4058 հայերը տեղափոխվում են Եգիպտոսի (5) ---------- (ո՞ր) քաղաքը:

19. Ներկայացրե՛ք գաղութատիրական համակարգի 2-ական դրական և բացասական կողմեր *(յուրաքանչյուրը 0,25 միավոր, ընդհանուր՝ 1 միավոր)*:

Դրական	Բացասական
1.	1.
2.	2.

20. Ներկայացրե՛ք նշված թագավորների արտաքին քաղաքականության 2-ական օրինակ *(յուրաքանչյուրը 0,25 միավոր, ընդհանուր՝ 1 միավոր)*:

Արտավազդ II	Արտաշես II
1.	1.
2.	2.

21. Ներկայացրե՛ք նշված կառավարիչների իրականացրած բարեփոխումների 2 օրինակ *(յուրաքանչյուրը 0,25 միավոր, ընդհանուր՝ 1 միավոր)*:

Աքբար	Շահ Աբբաս I
1.	1.
2.	2.

22. Ճանաչե՛ք նկարը և ներկայացրե՛ք իրադարձությունը *(2,5 միավոր)*:

1. Ի՞նչ իրադարձություն է ներկայացված լուսանկարում: Ե՞րբ և որտե՞ղ է այն տեղի ունեցել:
2. Որտե՞ղ է այն տեղի ունեցել: Ո՞ր աշխարհաքաղաքական հակամարտության ավարտն է խորհրդանշում
3. Ի՞նչ փոփոխություններ առաջացրեց (նշեք 2-ը)

---

23. Աշխատանք սկզբնաղբյուրի հետ. կարդացե՛ք և պատասխանե՛ք հարցերին.

«Հոդված 1. Հայաստանը հայտարարվում է անկախ Սոցիալիստական Հանրապետություն:
Հոդված 2. Մինչև Հայաստանի խորհուրդների համագումարի հրավիրումը կազմավորվում է ժամանակավոր Ռազմահեղափոխական կոմիտե, որին անցնում է ամբողջ իշխանությունը Հայաստանում:
Հոդված 4. Հայկական բանակի հրամանատարական կազմը չի ենթարկվում որևէ պատասխանատվության այն գործողությունների համար, որոնք կատարել է բանակի կազմում մինչև Հայաստանում խորհրդային իշխանության հռչակումը:
Հոդված 5. Դաշնակցության և Հայաստանի մյուս սոցիալիստական կուսակցությունների անդամները չեն ենթարկվելու բռնությունների կուսակցական պատկանելության համար:»:

1. Ո՞ր համաձայնագրից է մեջբերված հատվածը, ե՞րբ է այն կնքվել: *(1 միավոր)*:

---

2. Ովքե՞ր են ստորագրել համաձայնագիրը: Նշե՛ք 4-րդ կամ 5-րդ հոդվածների խախտման մեկ դեպք *(1 միավոր)*:

---

3. Նշե՛ք երկու պատմական իրադարձություն, որոնք անխուսափելի դարձրեցին այս համաձայնագրի կնքումը: *(1 միավոր)*:

(1) ----------

(2) ----------

24.Աշխատանք սկզբնաղբյուրի հետ. կարդացե՛ք և պատասխանե՛ք հարցերին.

1. Ո՞ր երկրների ներկայացուցիչներն են պատկերված (նշե՛ք 3 երկրի համապատասխան համարով) *(1 միավոր)*:

_____

_____

_____

2. Ի՞նչ է խորհրդանշում սեղանի վրա դրված «տորթը» և տիրակալների գործողությունը *(1 միավոր)*:

_____

_____

_____

3. Ո՞ր երկիրն է խորհրդանշում ծաղրանկարի հետնամասում պատկերված, ձեռքերը վեր բարձրացրած պաշտոնյան, ի՞նչ է փորձում անել *(1 միավոր)*:

_____

_____

25. Աշխատանք քարտեզի հետ:



1. Ո՞ր պայմանագրով է հաստատվել ընդգծված սահմանը, ո՞ր պետություններն է այն բաժանում *(1 միավոր)*:

---

2. Ո՞ր իրադարձության ավարտն էր սահմանում այդ պայմանագիրը, ե՞րբ է կնքվել այն *(1 միավոր)*:

---

3. Տարածքային ի՞նչ փոփոխություններ եղան այդ պայմանագրով *(1 միավոր)*:

Պատմության օլիմպիադայի

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ պ.գ.թ. Գևորգ Կեսոյան

27.03.2026 թ.